


ԾԱՎԱԼԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ՃՆՇՄԱՆ ՋԵՐՄԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնվելով Բոյլ-Մարիոտի, Գեյ-Լյուսակի և Շառլի օրենքների վրա՝ ցույց տանք, որ $\gamma = \alpha$: Դրա համար պատկերացնենք, որ հաստատուն զանգվածով իդեալական գազը 1 վիճակից անցնում է 3 վիճակը երկու եղանակով. 1→3 և 1→2→3 (տե՛ս նկարը):



1→2 պրոցեսը իզոխոր է, 2→3 պրոցեսը՝ իզոթերմ, իսկ 1→3 պրոցեսը՝ իզոբար: Այդ պրոցեսներին համապատասխանող տեղամասերի համար կարելի է գրել հետևյալ առնչությունները՝ $p = p_0(1 + \gamma t)$, $pV_0 = p_0V$ և $V = V_0(1 + \alpha t)$, որոնցից բխում է՝ $p_0(1 + \gamma t)V_0 = p_0 V_0(1 + \alpha t)$: Այստեղից էլ հետևում է, որ $\gamma = \alpha$: